ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 375002, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

29-ը դեկտեմբերի 2008թ.

ՈՐՈՇՈՒՄ N 04/01

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ անցկացված արտահերթ ընդհանուր ժողովը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատման և կանոնադրական կապիտալի ավելացման, ինչպես նաև ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին, հարցերի վերաբերյալ որոշեց.

1. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 17.10.2008թ. ժողովի որոշման հիման վրա թողարկված բաժնետոմսերի բաժանորդագրության (տեղաբաշխման) արդյունքները և ավելացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը՝ սահմանելով 5362005000 (հինգ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Ժողովի նախագահ՝ Բ. Բեգլարյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
ARARATBANK
ARAR BANK
02500518

Արձանագրություն
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի 29.12.2008թ. թիվ 04
արտահերթ ընդհանուր ժողովի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին բոլոր 804300 բաժնետոմսերի սեփականատերերից մասնակցել են (ուղղարկված քվեաթերթիկները վերադարձրել են) թվով 798793 հատ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող անձինք, որը կազմում է ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետեմսերի 99,3 %-ը:

Քվորումն ապահովված է ժողովը համարվում է կայացած:

Ժողովն անցկացվել է (վերադարձված քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներն ամփոփվել են) ք. Երևան, Պուշկինի 19 հասցեում 2008 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 9[00]-ին:

Ժողովի Նախագահ Բարսեղ Բեգլարյան
Ժողովի քարտուղար Նաիրա Շահնազարյան
Ժողովն անցկացվել է հետևյալ օրակարգով.

Օրակարգի առաջին հարց - Կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998% տոկոսը կամ 798778 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա, ձեռնպահ 0,002% կամ 15 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

1. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 17.10.2008թ. ժողովի որոշման հիման վրա բողարկված բաժնետոմսերի բաժանորդագրության (տեղաբաշխման) արդյունքները և ավելացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը՝ սահմանելով 5362005000 (հինգ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հազար) ՀՀ դրամ:

Օրակարգի երկրորդ հարց - Կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998% տոկոսը կամ 798778 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա, ձեռնպահ 0,002% կամ 15 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

2. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Ժողովի Նախագահ Բարսեղ Բեգլարյան

Ժողովի քարտուղար Նաիրա Շահնազարյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
ARARATBANK
ARARATBANK
02500518
L-01